

թեան մը և առանց ոռոգման։ — Ասոր մշակութիւնը ամեն տարի Ատան կը բաշէ հազարաւոր գործաւոր ընտանիքներ կեղևման և հունձբին համար։

Ճառափառությ յետ խօսելու Պաղտատի երկաթուղու պատճառաւ խտալական նորակազմ գաղութին վրայ, կը վերջացնէ բանախօսութիւնը գոյնզգոյն խօսքերով և պատկերներով ներկայացնելով այն ցեղերու խառնուրդներն որ բերրի գաւառը կը չինցնեն։

Առհասարակ բոլոր բազմականաց ծափակարութեանց արժանացաւ սոյն ճառախօսութիւնը, այնպէս որ յետոյ պատշաճ տեսնուեցաւ նոյնը կրկնել նաև Արևանոյ քաղաքին մէջ։ Կը մաղթենք որ նման ընթերցումներ մեր երկիրը լաւագոյն կերպով ծանօթացնեն բոլոր Եւրոպիոյ։

Հ. Վ. Խ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԽԱՐՔ

Ա. Բ. Բ. Ի. Ա. Ն. Ո. Ս

(Տիս էջ 104)

Աբրիանոս կը շարտնակէ Պոմպէոսի և Միհրդատայ փոփոխ բաղդերը նկարագրել յաջորդ գլուխներու մէջ։ Պաշարուած ի սովոյ, անօգնական, գաւաճանուած իրեններէն և յարդուած նաև իր թշնամիներէն, Միհրդատան նորանոր գաղափարներով յորդորուած կը գիմէ զանազան երկիրներ անակընկալ արագութեամբ նոր գաշնակցութիւններ կամեմեռ, նոր գօրագունդեր հաւաքերուա «Ոչ թէ սովորական փախտականի մը պէս կը լրջէր՝ կ'ըսէ Արքանոս այս երթեւեկները նկարագրելով, և ոչ աշ անարժան ու նկնախոհ գաղափարով», այլ ընդհակառակ առակն իր յանդուգն գիտումն է վերստին առնոււ Պատրիք թագաւորութիւնն իր ապերտիս Ամակար որդուոյն ձեռքին և գրաւելով նեղ ծովանցքը, կտրել Պոմպէյեան բանակի ցամաքային յարաբերութիւնը Հը-

ովմայ հետ և բոլորավին ջախչախել անոր մշէկոնմերը։ Բայց բաղդը չի գուցանթանար իրեն քաջութեան և արիութեան։ անխոհեմ և անարդարանալի յուզում մը պահակապան զինուորաց, իր բանակին կորստեան պատճառ կ'ըլլայ։

Միհրդատ կը բանայ իր Սինորիկա գրեկակին գանձերու և առաս ոռնիկ կը բաշխէ վարձաւոր գունդերու և միամեայ թոշակ կը հաստոցանէ անոնց կանխաւ։ Պլուտարքոս այս Սինորիկա գրեկակի կը ճանչնայ ինորա անուամբ, և գիտէ որ հոն կը պահուէին թագաւորին հարաստութիւնք և ամէնէն աւելի թանկազին իրերը։ Հոնկից, կ'ըսէ, առաւ Միհրդատ մեծագին հանդերձներ և բաշխց բոլոր անոնց որ փախստեան միջոց ընկերացած էին իրեն։ և տուաւ նաև իր բարեկամներէ իւրաքանչիւր մէկին մահացու թոյն մը, որպէս զի հետերնին կրեն միշտ և վըտանգի պահուն գործածեն զայն եթէ կ'ուզեն, թշնամեաց ձեռքն ողջամբ չինալու համար։

Հոս կ'արժէ յիշատակել նաև պատուավ արքունի հարձերէն մին, իրսիգրացիա անուամբ, որ միշտ և ամէն բանի մէջ այրական արիութիւն և յանդգնութիւն ցուցուց, և ամենուրեք ընկերացաւ իր տիրոջ, ծրպտեալ պարսիկ մարգու զգեստաւորութեամբ և ձիաւոր, շյունեցաւ շթաւցաւ բնաւ երկար արշաւներէ և չյետնեցաւ թագաւորին ետեւէն հասնելէ, ամէն իննամբ տանելով անոր անձին և ձիուն, փախստեան միջոց, մինչեւ որ վերոյիշեալ գղեակը հասան։

Այս նկարագրութեանց միջոց է որ Արքանոս վրաց ծագման նկատմամբ կը յիշատակէ կարծեաց զանազանութիւնն մը իւր ժամանակի գիտնոց մէջ, որոնցմէտ աւելի բաղդաւոր չեն երկիր մեր ժամանակի գիտնականք ալ։ կ'ըսէ։ «Կան ոմանք որ Աստոյ իրերից աները նախահայրեր կը համարին եւրոպական իրերիցաւց, կան ոմանք ալ որ ասոնցմէ սերած կը համարին առաջինները. բայց կան ոմանք ալ որ բոլորովին պատահական կը համարին անուններու նոյնաձայնութիւնը, որովհետեւ այլուատ բնաւ չեն նմանիր իրարու ոչ բարերով և տարագուք, և ոչ ալ լեզուաւ։»

Այսպիսի գաշնագրութեանց զրադած էր լովուրդք: Բայց Որէ՞զ՝ Աղուանից թագաւորին, և Աղուանից վրաց թագաւորը, կը զարանէին իրեն եօթանասուն հազար զինուորներով, կիւրոս (Կուր) գետին քով, որ տանուերկու բերաններով կը հօսի կասպից ծովուն մէջ, և ամէնն ալ նաւարիցի են. որովհետեւ կիւրոսի կը միանան դեռ ուրիշ շատ գետեր, որնց մէջ Երասին, քան զամէնն աւելի մեծագոյնը: Պոմպէոսի իմանալով եղած գարանակալրութիւնը կամուրջ ձգեց գետին վրայ, և բարբարոսները բոլոր փախուց ամենասխալտ անտառի մը մէջ, ուր իրենք ամենավարժ ու կարողք էին պատերազմելու, փոխն ի փոխ յանկարծակի ամենարեռութիւնով և մէջտեղ ելլերով: Պաշարեց այդ գարանուտ անտառը և հրդիչեց շրո կողմէն, և յետոյ սկսու հալածել փախուտակոն գարանամուտները, մինչեւ որ ամէնքն ալ անձնատուր եղան և պատանդները ու նուերներ բերին, այնպէս որ յետոյ Պոմպէոս Հռովմայ մէջ այս բաներուու համար ալ յալթանակի հանդէս կատարեց: Պատանդներու և գերիներու մէջ գտնուեցան նաև շատ վիրաւորեալ կանայք, մարդկանց պէս, և Ամազոնք կը կոշուէին. կարելի է որ Ամազոնաց աշխարհը սաշմանակից ըլլալու, ասոնկ օգնութեան եկած էին այդ տեղի թագաւորաց, և կամ ալ կրնայ ըլլալ որ բարբարոսները հնու սովորութիւն ունենան բոլոր պատերազմով կանայքն Ամազոն անուանելու:

Արքիանոս կը պատմէ նաև թէ ինչպէս Պոմպէոս չըլեցաւ կողքիս կողմէրը, այս պատմական տեղերը որ նուիրական եղած էին Արգոնաւորդաց, Դիոսկուրեանց, Հերակլի և այլն յիշատակներով, մանաւանդ հետաքրքրուելով տեսնել Պոմպէոթեսի տանձակի կովկասու իրանց վրայ, ինչպէս կ'աւանդեն:

Կ'ըսէ. «Կովկասու լեռներէն վար կը հոսին բազմաթիւ առուակներ ունիւր աննշմարելի աւանդներով լի, և բնակիչք անոնց մէջ կ'ընկըմեն բրդոտ զգաթներ որպէս զի աւագները անոնց մէջ դիզուին և կարհնան ժողվել, և թերևս այսպիսի բան մ'էր Այետասի ոսկելէն գեղմը: Մինչ յայսպէս կը շըրջէր Պոմպէոս այդ տեղերը ճանշնալու համար, իրեն կ'ընկերէին բոլոր մերձակայ ժու-

լովուրդք: Բայց Որէ՞զ՝ Աղուանից թագաւորին, և Աղուանից վրաց թագաւորը, կը զարանէին իրեն եօթանասուն հազար զինուորներով, կիւրոս (Կուր) գետին քով, որ տանուերկու բերաններով կը հօսի կասպից ծովուն մէջ, և ամէնն ալ նաւարիցի են. որովհետեւ կիւրոսի կը միանան դեռ ուրիշ շատ գետեր, որնց մէջ Երասին, քան զամէնն աւելի մեծագոյնը: Պոմպէոսի իմանալով եղած գարանակալրութիւնը կամուրջ ձգեց գետին վրայ, և բարբարոսները բոլոր փախուց ամենասխալտ անտառի մը մէջ, ուր իրենք ամենավարժ ու կարողք էին պատերազմելու, փոխն ի փոխ յանկարծակի ամենարեռութիւնով և մէջտեղ ելլերով: Պաշարեց այդ գարանուտ անտառը և հրդիչեց շրո կողմէն, և յետոյ սկսու հալածել փախուտակոն գարանամուտները, մինչեւ որ ամէնքն ալ անձնատուր եղան և պատանդները ու նուերներ բերին, այնպէս որ յետոյ Պոմպէոս Հռովմայ մէջ այս բաներուու համար ալ յալթանակի հանդէս կատարեց: Պատանդներու և գերիներու մէջ գտնուեցան նաև շատ վիրաւորեալ կանայք, մարդկանց պէս, և Ամազոնք կը կոշուէին. կարելի է որ Ամազոնաց աշխարհը սաշմանակից ըլլալու, ասոնկ օգնութեան եկած էին այդ տեղի թագաւորաց, և կամ ալ կրնայ ըլլալ որ բարբարոսները հնու սովորութիւն ունենան բոլոր պատերազմով կանայքն Ամազոն անուանելու:

Պլուտարքոս քիչ մը տարրեր ոնով կ'աւանդէ զայս. Կ'ըսէ թէ, վերցիշեալ երկու թագաւորները, Որէզ և Արտովիկ, ի սկզբան ազատ անցք չնորհեցին Պոմպէոսի, ինչպէս որ խնդիրը էր: Բայց իրեն բանակը վերահսած ճմեռ ժամանակ հօն գտնուելով և այն օրերու մէջ ալ Հռովմայ եցիք Այտուռնական տօներու հանդէսներ ունենալով, ասոնք քառասուն հազարէ աւելի բազմութեամբ յարձակեցան Պոմպէոսի վրայ, անցնելով կիւրոս (Կուր) գետին, որ վրական լեռներէն կը բըլի: Սատուռնական տօները կը կատարուէին Հռովմայ մէջ գեկտեմբեր ամսոյն կէսին և կը տեսէին երեք օր:

Այս ամէնէն վերջ կը շարունակէ Արքիանոս:

* *

104. — Անտի դէպ ի յետս դառնալով Պոմպէոս քաղցր դէպ ի Հայաստան, որովհետև Տիգրանայ յանցանց կը համարէր Միհրդատայ հետ զաշնակից ըլլալն: Եւ արդէն զրեթէ մօտ հասած էր Արտաշատայ, Հայաստանի մայրաքաղաքին: Սակայն Տիգրան զեռ պատերազմիլու յօժարովին չունէր, առ Միհրդատայ աղջկանէն երեք զաւակներ ունեցած էր, բայց անոնց երկուցն ինցն անձամբ՝ սպաննած էր. մին՝ այն պատճառու որ պատերազմի մը միջոց հօրը դէմ ապրստամբած էր, և երկրորդը՝ որովհետեւ որսորդովին մը ժամանակ մինչ Հայրը գետին ինկած էր, նա չէր փութացած իրեն օգնել ու յարուցանել զինքը, նա մասնաւանդ մինչզեռ զինքը գետին տապալած կը տեսնէր, անոր թագն առած ու իր զուխը դրած էր: Երբորդ որդին՝ Տիգրան, նոյն իսկ հօրը՝ Տիգրանայ ձեռքէն ստացած էր թագաւորութեան պասկը, որովհետև սաստիկ ցաւած էր իւր հօրն անկման վրայ. սակայն թիշ յետոյ այս ալ ապստամբելով՝ հօրը դէմ պատերազմ մըզեց և յաշթուեցաւ և ապաստանեցաւ Հրահատ թագաւորին քով որ դեռ նոր իւր հօրը Ախնդրիկոսի յաջորդեր էր: Արդսա, փոքր Տիգրանը, տեսնելով Հռովմայեցւոց մերձենալը, խորհրդակցեցաւ Հրահատի հետ, և անոր հաւանութեամբ՝ որովհետև ինցն ալ Պոմպէոսի յատուկ

բարեկամութիւնը կը փնտոէր, — որքան ալ թոռն էր Միհրդատայ՝ այնու հանդերձ իրեկ աղաշաւոր զիմեց առ Պոմպէոս, որովհետև այս հրամանատարը բարարուսաց մէջ մեծ համբաւ ստացած էր իրեն արդարութեան և հաւատարմութեան համար: Այս յատկութիւնը յարգելով նաև Տիգրան հայրն, ինքն ալ առանց առաջոց խաղաղութեան պատուիրակներն անգամ զրկելու, եկաւ առ Պոմպէոսի բոլորվին ինքինքն և իրեն բոլոր միւս զործերը Պոմպէոսի արդարութեան յանձնելու զիտմամբ, և միանգամայն իր որդին՝ Տիգրանն ամբաստանան բարեկամ համար անոր առջև: Պոմպէոս իրեկ ի նշան պատուոյ և միծարանաց Տիգրանայ ընդ առաջ զրկեց տրիբուններ և ծիաւորաց հրամանատարներ. սակայն Տիգրանայ հետ գտնուողները վախցան մօտենալու առանց առաջոց խաղաղութեան պատուիրակներ զրկելու և դարձեալ ետ քաշուեցան: Այնու հանդերձ Տիգրան զնաց յառաջ, և բարբարոսաց սովորութեան համեմատ երկրպագեց Պոմպէոսի առջև, իրեկ աւելի արժանաւորագոյն անձի մը: Թիշպէտ և կանոմանց որոշներ կը հաստատեն թէ առ այդ բռնադատուեցաւ զինակիրներէ, նոյն իսկ Պոմպէոսի հրամանաւ: Խնչպէս ալ ըլլայ, եկաւ և արդարացուց իւր գործերը, զեց հազար տաղանդ տուաւ Պոմպէոսի, յիշսուն զրամ ամէն զինուորի, հազար զրամ իւրացանչիւր հարիւրապետի և տասն հազար ալ իւրացանչիւր տրիբուններու: Պոմպէոս ներեց իրեն բոլոր անցեալ-

1. Պուտարքու հետեւալ կերպով կը նըրկարագրէ Տիգրանայ առ Պոմպէոս ներկայանալը. «Երբ Տիգրան ձիու վրայ հեծած հասաւ Հռովմայեցւոց նամբարը, Պոմպէոսի երկու զաւագանակիրք իրեն ընդառաջ եկան և հրամայեցին որ ձիէն վար իինէ, և հետիւտան առաջ երթայ, որովհետեւ երբեք տեսնուած չիր որ մարդ մը Հռովմայեցի զինուորաց բանակին մէջ մտնէր ձիաւոր: Տիգրան հնազանդեցաւ և քակերով սուրը մէջքէն,

յանձնեց զայն իրենց. և վերջապէս երբ հասաւ Պոմպէոսի առջև, հանեց զիմէն արքունի պսակը և շարժեցաւ զայն Պոմպէոսի ոտից առջև զներու և ինքն ալ ամենամեծ նախատինքով մօտ էր ծնրապիր իյնալու անոր զիմաց: Սակայն Պոմպէոս կանխելով առաւ անոր աջը, յառաջ մատոյց և նատեցոց անոր որդին իրեն քով, արքունի ապարօշը կապեց անոր ճակտին վրայ, և մընիթարեց զինքն ըսելով որ, չէր կորանցու-

ները և հաշտեցուց վերստին իր որդույն նետ, և սահմանուեցաւ որ որդին թագաւորէ Ծոփաց և կորդուաց, որոնց այսօր Փոքր Հայաստան կը կոչուին¹, և հայրը թագաւորէ բռլոր միւս Հայաստանի, այն պայմանաւ սակայն՝ որ իր մահուանէն վերջ հոն ալ որդին պիտի յաջորդէ իրեն։ Խսկ նկատմամբ նոր գրաւած երկիրներուն, պէտք էր ցաղովիլ անոնցմէ, և յիշափ բաշուեցաւ Ասորիքն, այն գաւառուներէն՝ որոնց կը գտնուին ընդ մէջ Եփրատայ և ծովու որովհետ Տիգրան ասոնց ալ գրաւած էր կիրիկիոյ մէկ մասամբ մ'ա, վանելով անտի Պիռո անուանուած Անտիոքոսը։ Հայերը, որոնց Տիգրանի ընկերաց էին անոր առ Պոմպէոս երթաւու միջոց, կասկածելով իր Վրէժինդրութենէն՝ զինքը թողած ըլլալուն համար,

ցած Հայաստանի թագաւորութիւնը, մանաւանդ թէ Հռովմայեցուց բարեկամութիւնն ալ վաստկած էր։ Եւ յետոյ հրաւիրեց ճաշչի։

Խսկ Տիգրանայ որդին որ Պոմպէոսի միւս կողմը նստած էր, ոտք շելաւ և ոչ խսկ ողջունեց իւր հայրը։ Եւ ոչ ալ գնաց ճաշչի, ինչպէս որ Պոմպէոս հրաւիրած էր. բայց այս եղան պատճառը որ Պոմպէոսի ատելի դարձաւ։

Խսկ Դին կասիսու այսպէս կը գրէ։ «Աւակայն Տիգրանն Պոմպէոսի առջև միանդամայն թէ՝ յարգանաց և թէ՝ գթութեան արժանի երկնարու համար, այնպիսի կերպով մը ըզգիստաւորուած էր, որ միջին վիճակ մ'էր ընդ մէջ իւր առաջին շքեղ հանդիսաւորութեան և ներկայ սատրութեան։ Եւ յիրաւի մերկացած էր իւր սպիտակ կիսաւորեալ ծիրանի պատճենանէն, և իւր վերնազգեատէն, (զոր աշնունք կը կոչէ), բոլորպին ծիրաննեզոյն բեհնէց, և միայն գլուխը կը կրէր խոյրը՝ ապարօշով։ Պոմպէոս գաւառնակիրի մը միջոցաւ հրամայեց իրեն որ ծիէն վար իջնէ, որովհետեւ լսաւ իրեն հայրենեաց սովորութեան, Տիգրան միջին խսկ բուն ներին զակիշին մէջ ձիւաւոր պիտի

գրգռեցին զորդին, մինչդեռ Հռովմայեցուց ցով կը գտնուէր, որպէս զի յարձակի հօրը վրայ և զայն մեղցնէ։ Խակայն դաւանաւութիւնն յայտնուելով ինքը կալանաւուեցաւ շղթայակապ²։ Այս վիճակիս մէջ ալ ջանաց Պարթենները Պոմպէոսի դէմ յարուցանել։ այս պատճառու ալ յաղթենակի համար տարուեցաւ և քանտի մէջ սպանուեցաւ վերջապէս։ Պոմպէոս համարելով որ արդէն խսկ ամրող պատրազման աւարտած ըլլայ, բաղադր մը հիմնեց այն տեղ՝ ուր ճակատամարտի մէջ յաղթած էր Միհրդատայ, և զայն անուանեց Նիկոպոլիս, որ կը գտնուի Փոքր Հայաստանի մէջ։ Սահմանեց վերստին որ Արիորարզան թագաւորէ Ծոփաց և կորպուաց մէջ, որոնց առաջ արուած եին Տիգրանայ որդւոյն, և որոնց հիմայ մասն

մանէր։ Սակայն, տեսնելով որ ինքնին Պոմպէոս կը ծնրադրէ իւր առջև գետնի վրայ և կ'երկրպագէ իրեն, գթացաւ անոր վրայ և անապարանօք ցատելով իւր աթոռէն, վեր բարձրացաւ զինքը։

1. Դին կասիս կ'ըսէ. «Տիգրանայ որդւոյն սահմանեց միայն Ծոփաց գաւառը, ուր կը պահուէին Հայաստանի թագաւորին գանձերը, որոնց նկատմամբ ծագած էր պատաւոյն կուրը, և չերմապէս կը պահանձէր, բայց բոլոր իւր յոյսերը պարապի եւ լուզ (քանի որ Պոմպէոս ուրիշ կերպով պիտի չկարենար պայմանագրուած դրամը հայթայթել) բարկացած մտածեց փախչիւ։ Պոմպէոս ժամանակին անդրադարձաւ զայն և իրեն վրայ պահապաններ կարգեց՝ հսկելու»։

2. Կը գրէ դաշնաւալ Դին կասիս որ Պոմպէոս բարիկացաւ Տիգրանայ որդւոյն դէմ, որովհետեւ վերսիկեալ զանձերուն պահապանները զանոնք չլոգեցին յանձնել իրեն հօրը. և այս մերժումը իրեն արդիւնք համարուեցաւ Փոքր Տիգրանայ հրամանին։ Եւ այս միայն բաւական համարուեցաւ զինքը շղթայակալ բանտելու և պահելու զայն իր յաղթանակի հանդիսին։

կը կազմեն կապաղովկիոյ նահանգապետութեան, ասոնց աւելցոց նաև կաստապալայն և կիլիկիոյ ուրիշ քաղաքները: Սակայն Արքորարզան զեռ իր կենդանութեան միջոց, իր որդույն յանձնեց բոլոր այդ թագաւորութիւնը, յորում շատ փոփոխութիւնը կատարուեցան մինչև յօդուստո կեսար, որոն կայսրութեան ժամանակ, այս թագաւորութիւնն ալ, ինչպէս ուրիշ շատ թագաւորութիւններ, վերածուեցաւ պարզապէս նահանգի մը:

106. — Այսուհետեւ Պոմպէոս անցնելով Տաւրոս լեռներէն, պատերազմեցաւ կումագենէի թագաւորին՝ Անտիոքոսի դէմ, մինչև որ Անտիոքոս ալ իրեն բարեկամ եղաւ: Բաց աստի, կամ այն պատճառաւ որ Դարեհ Մարաց թագաւորը, այս պատերազմիս մասնակցած էր ի նպաստ Տիգրանի կուռած էր, պատերազմ հրատարակեց Գարեհի դէմ և զայն խորտակեց: Գնաց զէնքերով նաև Նարաղացի Արարներուն դէմ, որոնց թագաւորն էր Աքետաս: Ինչպէս գնաց նաև Հրէից դէմ, որովհետեւ Արխտարուղոն իրենց թագաւորն ապստամբած էր, և վերջապէս առաւ Երուսալէմը, իրենց ամէնէն սրբազան քաղաքը: Բաց աստի շրջնցաւ, և առանց ընաւ զէնք գործածելու՝ Հռովմայեցոց հպատակեցոց բոլոր Կիլիկիան, որ դեռ Հռովմայեցոց հպատակութիւնը չէր ընդունած, և բոլոր այն զաւառները որ կը մնային Ասորիքէն, Եփրատայ շուրջը, Կելեսիրեան, Փինիկէն, Պաղեստինը, Եղոմէան, Ետորիան և ուրիշ որ և է անուն ունեցող ազգեր՝ որոնց Ասորիքը կը կազմեն: Եւ այս ամէնն ըրաւ ոչ եթէ Անտիոքոս Պիոսի որդույն՝ Անտիոքոսի դէմ վրէմինդրութեան մը պատճառաւ, — մինչ սա իր քովն էր, և աղաչանօք իրեն հայրենի թագաւորութիւնը կը թափանձէր, — այլ այն պատճառաւ որ՝ անտի հալածած ըլլալով զծիրան, Անտիոքոսի յաղթականը, կը համարէր թէ այդ երկիրներու զրաւութ Հռովմայեցոց ստացուած իրաւունց մ'ըլլայ: Մինչդեռ նա այսպիսի

կարգադրութիւններ կը սահմանէր, դեպաններ հասան իրեն Հրահատէն և Ցիւզրանէն, որոնք իրարու հետ պատերազմ սկսած էին: Ասոնց ոմանց կ'ուզէին որ Պոմպէոս պատերազմի ի նպաստ Տիգրանայ, որ իրեն բարեկամն եղած էր: իսկ միւսները կ'առաջարկէին իրեն Պարթեաց բարեկամութիւնը Հռովմայեցոց հետ: Սակայն Պոմպէոս չուզելով Պարթեաց դէմ պատերազմ մը սկսիլ առանց Հռովմէն հրահանգ մը ստանալու, հաշտութեան մինորդներ զրկեց երկուքին միջն:

Այս վիճակի մէջ էր Պոմպէոս:
(Շարայարելի)

Հ. Յ. ԱհԳԵՐ

ՎԵՆԵՏԿԵԱՆ ՑԻՇԱՏԱԿՆԵՐ

Երեք հրատարակութիւններ ունինք մեր զիմաց, որոնց թանկագին յիշատակներ կը պարունակեն վենետիկեան կենաց և պատմութեան վերաբերեալ. Փոքր են ծաւալով, այլ բովանդակութիւնն է որ զանոնց յարգի Կընծայէ ուսումնասիրաց, իսկ մեզ համար նոր փայլ մ'ալ կը ստանան մեծ: Հեղինակներու ազնիւ բարեկամութեանէն առ լիւսու և Զերմ համակրանքէն առ Ազգու: Երեքն ալ զիւանական թուզբերու մէջ թացուն անծանօթ պատմութեանց և ըզգացմանց արձագանքներ են որ զարերու հեռաւորութեանէն նուազ և անոյց մեղեղի մը տպաւորութիւնը կը թողուն մեր վրայ:

I. Պիոս Զ. Փ. այցելութիւնն ի Վենետիկ

1782 Մայիս 15էն 19 վենետիկոյ տարեգոց մէջ անմուանալի հանդիսաւորութեանց օրեր եղան: Հասարակապետութիւնը թէպէտ կորուսած էր իր ահեղ ուժոյն սարսափին և ազդեցութիւնը բաւա-